# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
# ՄԱՐԶՊԵՏ

*ք. Եղեգնաձոր, Շահումյան 5* *Հեռ. /374010/ 287401, 2 25 22*

*<<_______>> ապրիլ 2019թ. N ____________________________* *Ֆաքս /374010/ 28 18 32*

*ԻՐԱՎԱԲԱՆ ՄԱՍԻՍ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ*

*Հարգելի պարոն Մելքոնյան*

*Ի պատասխան Ձեր հարցման (մուտք՝ 04.04.2018թ., թիվ՝ 2251)՝ ներկայացնում ենք պահանջվող տեղեկատվությունն ըստ կետերի:*

*2018թ. ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի քաղաքացիական ծառայող հանդիսացող աշխատակիցները, կատարողականի արդյունքների հիման վրա, պարգևատրվել են երկու անգամ՝ ըստ կիսամյակների՝ ընդհանուր 23.990.900 ՀՀ դրամի չափով, իսկ մարզպետարանի բոլոր աշխատակիցները մեկ անգամ՝ աշխատավարձի ֆոնդի տնտեսված գումարների հաշվին՝ ընդհանուր 5.213.400 ՀՀ դրամի չափով:*

*Պարգևատրման համար հիմք են հանդիսացել <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ, 22-րդ հոդվածները:*

*Պարգևատրված աշխատողների ցուցակն ըստ զբաղեցրած պաշտոնի և ստացած պարգևատրումների չափի չենք կարող տրամադրել, քանի որ չեն ստացել աշխատակիցների համաձայնությունը՝ իրենց տվյալները փոխանցելու համար: Համաձայն <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, <<Անձնական տվյալների պաշտպանության մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի՝ անձնական տվյալները, առանց տվյալների սուբյեկտի համաձայնության, չեն կարող օգտագործվել այլ նպատակներով: Մարզպետարանի աշխատակիցների հասցեացուցակը տեղադրված է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքէջում:*

Invalid signature

X 

ՌԱԶՄԻԿ ՏՈՆՈՅԱՆ

**ՀԱՐԳԱՆՔՈՎ** Signed by: TONOYAN RAZMIK 3908810688 **Տ. ՍԱՐԳՍՅԱՆ**

*Կատ՝ Ն. Մաղաքյան*
*Հեռ՝(0281) 2 55 95*